

Հայտարարվում է մրցույթ ՀՀ Սյունիքի մարզի Կապանի թիվ 3 միջնակարգ դպրոցի 2 դասվարի (շաբաթական 18 ժամ և 15 ժամ), <<Քիմիա>> (շաբաթական 3 ժամ), <<Պատմություն>> (շաբաթական 15 ժամ), <<Մաթեմատիկա>> (շաբաթական 11 ժամ) <<Կենսաբանություն>> (շաբաթական 6 ժամ), <<Աշխարհագրություն>> (շաբաթական 7 ժամ) առարկաների ուսուցչի թափուր տեղի համար: Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է 2 փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում.

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է / ձև 1/:
2. Փաստաթուղթ /դիպլոմ/՝ <<Հանրակրթության մասին >> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,

3. Անձնագրի պատճենը

4. Ինքնակենսագրություն /ձև 4/

5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները /դրանց առկայության դեպքում/

6. Մեկ լուսանկար՝ 3X4 չափի

7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի հանրապետությունում աշխատելու իրավունք

8. Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն թվականի սեպտեմբերի 7-ից մինչև սեպտեմբերի 20-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 09⁰⁰-15⁰⁰, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

<<Դասվար>>, <<Մաթեմատիկա>> և <<Աշխարհագրություն>> առարկաների մրցույթը տեղի կունենա սույն թվականի սեպտեմբերի 27-ին ժամը 15⁰⁰, իսկ <<Քիմիա>>, <<Պատմություն>>, <<Կենսաբանություն>> առարկաներինը՝ սեպտեմբերի 28-ին ժամը 15⁰⁰ «Կապանի թիվ 3 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում. հասցե՝ ք. Կապան, Ա. Մանուկյան 7:

Տեղեկությունների համար զանգահարել 093-933-233, (0285)5-26-39 հեռախոսահամարներով: